# ԿԱՐԳԱԼՈՒՅԾ Է ԱՐՎԱԾ Տ. ՏԱԹԵՎ ՔՀՆ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԸ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 30 մարտի 2000 թ.:**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի բարձր փնօրհնությամբ Արարատյան Հայրապետական թեմի Նորք-Մարաշ թաղամասի (Երևան) Ս. Աստ-վածածին եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Տաթև քհն. Աբրահամյանը ապրիլի 1-ից կար-գալույծ է հռչակված:

Հայրապետական վճիռը կայացվել է՝ նկատի առնելով, որ վերոհիշյալ քահա-նան, դրժելով ծառայության իր ուխտը, դրսևորել է հայ հոգևորականին անհարիր վարքագիծ և լքել իրեն վստահված հոտը:

Կարգալույծ արված քահանան այսուհետ դասվում է աշխարհականների շարքը և կկոչվի իր աշխարհիկ անունով՝ Գագիկ Աբրահամյան:

*ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ*